ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 2002թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնևում ստորագրված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրության կնքումը ուղղված է պայմանավորվող կողմերի միջև քաղաքացիական դատաիրավական փոխհարաբերությունների կարգավորմանը:

Արձանագրության փոփոխությունները նպատակաուղղված են դյուրացնելու անչափահասների իրավուքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև նախատեսվում է անչափահասների օգտին ալիմենտ բռնագանձելու մասին վճռի հարկադիր կատարումը թույլատրելու մասին միջնորդության քննության համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Վերոնշյալ կոնվենցիայում նախատեսված փոփոխությունները նպատակ ունեն նաև համապատասխանեցնել ԱՊՀ մասնակից պետություններում կիրարկվող տերմինները, ինչպես նաև ներառել խմբագրական ուղղումները և լրացումները:

Հաշվի առնելով վերոգրյալը և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 4-րդ հոդվածը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը նպատակահարմար է գտնում «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիայում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրության ստորագրումը:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Recoverable Signature

X

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARMENUHI 6610760128

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ